

4.3. Չբուսաշրջություն

4.3.1. Միջազգային զբոսաշրջություն

Միջազգային զբոսաշրջության որոշ ցուցանիշներ 2018-2019թթ. հունվար-հունիսին

	2018թ. հունվար-հունիս	2019թ. հունվար-հունիս	2019թ. հունվար-հունիսը 2018թ. հունվար-հունիսի նկատմամբ
մարդ			
<b>Ժամանողներ<sup>1</sup></b>			
Ժամանել են ուղևորներ, որոնք ըստ ՉՀԿ մեթոդաբանության համարվում են զբոսաշրջիկ <sup>2</sup>	<b>685 979</b>	<b>770 055</b>	<b>112.3</b>
որոնցից տեղավորվել են՝			
հյուրանոցային տնտեսության օբյեկտներում <sup>3</sup>	139 485	222 576	159.6
բարեկամի կամ հարազատի տանը, վարձով տրվող բնակարաններում և այլն	546 494	547 479	100.2
<b>Մեկնողներ</b>			
Մեկնել են ուղևորներ, որոնք ըստ ՉՀԿ մեթոդաբանության համարվում են զբոսաշրջիկ	<b>610 944</b>	<b>684 808</b>	<b>112.1</b>
որոնցից ուղևորությունը կազմակերպվել է զբոսաշրջային գործակալությունների կողմից	1 087	3 729	3.4 անգ.
ինքնուրույն	609 857	681 079	111.7

<sup>1</sup>Ներգնա և արտագնա զբոսաշրջիկների ընդհանուր թվաքանակի հաշվարկման համար հիմք է հանդիսացել սահմանային անցման կետերում ուղևորների հաշվառման արդյունքում արձանագրված՝ ՀՀ ժամանողների և ՀՀ-ից մեկնածների թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը, ստացված ՀՀ ազգային անվտանգության ծառայության (ՀՀ ԱԱԾ) ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգով, ինչպես նաև 2013թ. ՀՀ էկոնոմիկայի նախարարության, Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի, Հայաստանում դոնոր կազմակերպությունների՝ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) և ԱՄՆ ՄՁԳ Ձեռնարկությունների զարգացման և շուկայի մրցունակության (USAID EDMC) ծրագրի համագործակցությամբ իրականացված «Ժամանողների և մեկնողների ընտրանքային հետազոտության» արդյունքները:

<sup>2</sup>Ըստ ՄԱԿ-ի զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (ՉՀԿ) մեթոդաբանության (International Recommendations for Tourism Statistics 2008, Compilation Guide, UN WTO, Madrid, November 2010) **միջազգային զբոսաշրջիկ** է համարվում ցանկացած անձը, որը հանգստանալու, բուժվելու, հարազատներին այցելելու, գործնական, կրոնական կամ այլ նպատակներով ճանապարհորդում է իր հիմնական բնակության վայրից մեկ այլ վայր ոչ պակաս քան 24 ժամ և ոչ ավել քան անընդմեջ 1 տարի ժամանակով: Այսինքն՝ նրա հիմնական նպատակը ճանապարհորդելն է, այլ ոչ թե աշխատանքային գործունեությամբ զբաղվելը, որի դեպքում ուղևորության համար վճարումները կկատարվեին ժամանած վայրում աշխատանքային գործունեությունից ստացված ֆինանսական միջոցների հաշվին:

<sup>3</sup>Ցուցանիշը ներառում է միայն ըստ տնտեսական գործունեության հիմնական տեսակով ներկայացված տնտեսավարող սուբյեկտների տվյալները:

ՀՀ այցելած զբոսաշրջիկների աշխարհագրական բաշխվածության կառուցվածքն ու աճի տեմպը 2018-2019թթ. հունվար-հունիսին<sup>1</sup>

	Տեսակարար կշիռը,%		Զբոսաշրջիկների բացարձակ թվաքանակի աճի տեմպը, %
	2018թ. հունվար-հունիս	2019թ. հունվար-հունիս	
<b>Ընդամենը</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>	<b>159.6</b>
<i>այդ թվում՝</i>			
<b>ԱՊՀ երկրներ</b>	<b>27.1</b>	<b>26.5</b>	<b>156.1</b>
<i>այդ թվում՝</i>			
Ուկրաինա	2.4	1.5	101.1
Ռուսաստանի Դաշնություն	23.6	23.7	160.2
ԱՊՀ այլ երկրներ	1.1	1.3	186.4
<b>ԵՄ երկրներ</b>	<b>24.0</b>	<b>25.2</b>	<b>167.4</b>
<i>այդ թվում՝</i>			
Նիդերլանդներ	0.7	0.9	2.0 անգ.
Իտալիա	2.4	2.5	164.7
Ֆրանսիա	4.2	6.1	2.3 անգ.
Գերմանիա	6.4	7.7	190.0
Միացյալ Թագավորություն	3.0	0.6	33.5
ԵՄ այլ երկրներ	7.3	7.4	162.7
<b>Այլ երկրներ</b>	<b>48.9</b>	<b>48.3</b>	<b>157.7</b>
<i>այդ թվում՝</i>			
ԱՄՆ	12.0	5.0	65.9
Իրանի Իսլամական Հանրապետություն	9.2	5.4	93.1
Վրաստան	2.9	1.7	91.5
Թուրքիա	0.8	0.2	47.6
Կանադա	1.7	0.7	69.4
այլ երկրներ	22.3	35.3	2.5 անգ.

Զբոսաշրջության ցուցանիշների կառուցվածքն ու աճի տեմպն ըստ այցելության նպատակի

	Տեսակարար կշիռը,%		Զբոսաշրջիկների բացարձակ թվաքանակի աճի տեմպը, %
	2018թ. հունվար-հունիս	2019թ. հունվար-հունիս	
<b>Ժամանողներ<sup>1</sup></b>			
<b>Ընդամենը զբոսաշրջիկներ</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>	<b>159.6</b>
<i>որոնցից՝ ըստ նպատակի</i>			
գործնական	22.9	16.4	114.0
հանգստի և ժամանցի	52.5	54.4	165.1
կրթության	-	-	-
բուժման	1.5	0.6	61.2
այլ	23.1	28.6	198.2
<b>Մեկնողներ<sup>2</sup></b>			
<b>Ընդամենը զբոսաշրջիկներ</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>	<b>3.4 անգ.</b>
<i>որոնցից՝ ըստ նպատակի</i>			
գործնական	2.0	24.2	41.0 անգ.
հանգստի և ժամանցի	98.0	75.4	2.6 անգ.
կրթության	-	-	-
բուժման	-	-	-
այլ	-	0.4	-

<sup>1</sup>Բերված տվյալներն արտացոլում են հյուրանոցային տնտեսության օբյեկտներում (հյուրանոցներ, հյուրանոցատիպ հանգրվաններ, առողջարաններ, հանգստյան տներ և այլն) հաշվառված զբոսաշրջիկներին:

<sup>2</sup>Տվյալներն արտացոլում են միայն զբոսաշրջային գործակալությունների կողմից կազմակերպված զբոսաշրջիկների թվաքանակը: